ՀՈՒՇԱԳԻՐ

համագործակցության մասին

ք. Երևան «28» 02 2025թ.

ՀՀ ԿԳՄՄՆ-ն Երևանի տարածաշրջանային N1 պետական քոլեջի (այսուհետ՝ Քոլեջ), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրեն Պ.Սանթրոսյանի, և մյուս կողմից (այսուհետ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն հուշագիրը հետևյալի մասին.

1. *ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ*

Սույն հուշագրով Կողմերը նախատեսում են ՀՀ օրենսդրության շրջանակներում համագործակցել հուշագրի 2-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

2. *ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

2.1. Սույն հուշագրով համագործակցության շրջանակներում Կողմերը պատրաստակամ են համագործակցել Քոլեջի որակի ներքին ապահովման ենթակառուցվածքներին վերաբերող հարցերով՝ փորձի փոխանակման, գիտական կոնֆերանսների, սեմինարների, կլոր-սեղան քննարկումների, խորհրդակցությունների կազմակերպման, գիտական, մասնագիտական գրականության, մեթոդական ձեռնարկների, աշխատությունների, պարբերականների և այլ նյութերի փոխանակում: Կազմակերպել համատեղ աշխատանքային խմբեր և Կողմերի լիազորված աշխատակիցների միջոցով փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի քննարկում և լուծում: Սույն հուշագրի գործողության շրջանակներում Կողմերի գործառույթների կատարման համար, ըստ աշխատանքային անհրաժեշտության, Կողմերի գործունեությանը և մասնագիտացմանն առնչվող գիտագործնական համատեղ SWOT վերլուծությունների և բենչմարքինգի, ինչպես նաև մասնագիտական և կազմակերպական բնույթի այլ ուղղություններով քննարկումներ:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կողմերը պարտավորվում են ձեռնարկել բոլոր միջոցները սույն հուշագրով ստանձնած իրենց պարտականությունները բարեխղճորեն, Կողմերի միջև համաձայնեցված ժամկետներում կատարելու համար: Սույն հուշագիրը Կողմերից ոչ մեկի համար ֆինանսական պարտավորություններ չի առաջացնում:

4. ՀՈՒՇԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

Սույն հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից և գործում է անորոշ ժամկետով:

5. ՀՈՒՇԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄԸ

Սույն հուշագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ ենթադրվող դադարեցման օրվանից ոչ ուշ, քան 1 (մեկ) ամիս առաջ մյուս Կողմին գրավոր ծանուցմամբ:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն հուշագրով նախատեսված պարտականություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության, որը ծագել է հուշագիրը կնքելուց հետո և Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն հուշագրով պարտավորությունների կատարումը:

7. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

Սույն հուշագրի և դրա հիման վրա Կողմերի միջև կնքվող առանձին համաձայնագրերի կատարման ընթացքում առաջացած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով:

8. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն հուշագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ և համարվում են դրա անբաժանելի մասը: Սույն հուշագիրը կնքված է հայերեն լեզվով, հավասար իրավաբանական ուժ ունեցող հինգ օրինակից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. «Երևանի տարածաշրջանային N1 պետական քոլեջ» ՊՈԱԿ
Հասցե՝ ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 3/1
Հեռ. (010) 28-57-82, (010) 28-56-12

Տնօրեն՝ _____ Պ. Սանթրոսյան

2. «Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային N2 պետական քոլեջ» ՊՈԱԿ
Հասցե՝ ք. Երևան, Մոլորվնկան 37 Ա
Հեռ. (010) 67-23-01

Տնօրենի ժ/պ՝ _____ Ն. Հովհաննիսյան

3. «Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջ» ՊՈԱԿ
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց 40
Հեռ. (010) 44-07-32

Տնօրեն՝ _____ Ա. Ղազարյան

4. «Երևանի պետական հումանիտար-տեխնիկական քոլեջ» ՊՈԱԿ
Հասցե՝ ք. Երևան, Ա. Տիգրանյան 21
Հեռ. (010) 20-06-18

Տնօրեն՝ _____ Ա. Տեր-Գրիգորյան

5. «Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ» ՊՈԱԿ
Հասցե՝ ք. Երևան, Սասունցի Դավիթ 52
Հեռ. (043) 00-56-11

Տնօրեն՝ _____ Ռ. Աբրահամյան